

---

---

**ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳԵՐԸ ԱՌՕՐԵԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐ-  
ԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

**Հ. Հ. ԱՂԱԽԱՆՅԱՆ**

Հատկապես 17-18-րդ դարերում համաշխարհային ճանաչման արժանացած հայ վաճառականության գործունեությունն ինչպես տնտեսական, այնպես էլ քաղաքական ու դիվանագիտական տեսանկյուններից արդեն բավականին հանգամանալից ուսումնվասիրված է<sup>1</sup>: Որոշ դիտողություններ են արվել նաև այն մասին, որ հայ վաճառականները նպաստել են գրատպության և առհասարակ գիտության զարգացմանը<sup>2</sup>: Սակայն հայ վաճառականության գործունեությունն այսքանով չի սահմանափակվել: Պարզվում է, որ նրանք մեծապես նպաստել են նաև առօրեական մտածողության զարգացմանը: Այդ կապակցությամբ Հր. Գ. Միրզոյանը դեռևս 1983թ. գրել է. «Գործի բերումով լինելով ժամանակի ամենազարգացած երկրներում, հայ վաճառականները օբյեկտիվորեն խաղում էին առաջավոր գաղափարներ տեղափոխողի դեր և ըստ այդմ էլ խոր փոփոխություններ էին մտցնում ոչ միայն մայր հայրենիքի տնտեսական ու գիտամշակութային կյանքում, այլև նույնիսկ *առօրեական մտածողության մեջ*»<sup>3</sup> (ընդգծումն իմն է.- Հ. Ա.): Սա նշանակում է, որ վաճառականությունն անչափ կարևոր դերակատարություն է ունեցել նաև մարդկանց առօրեական մտածողության փոփոխության ու զարգացման գործընթացներում, որը դեռևս ըստ արժանվույն ուսումնասիրված չէ: Իհարկե, հայ վաճառականության գործունեությունը տնտեսական ու քաղաքական տեսանկյուններից լուսաբանող գրականության մեջ հարևանցի ակնարկվել է այն մասին, որ իր հարաբերությունների

---

<sup>1</sup> Տե՛ս, օրինակ, **Լեո**, Խոջայական կապիտալը յեվ նրա քաղաքական-հասարակական դերը հայերի մեջ, Յերեվան, 1934, **Ա. Ալթոյաճեան**, Պատմութիւն հայ գաղթականութեան, հ. Գ., Մաս Ա., Գահիրե, 1961, **Վ. Քայրուրեան**, Համաշխարհային առեւտուրը եւ իրանահայութիւնը 17-րդ դարում, Թեհրան, 1996, **Վ. Քայրուրյան**, Իրանահայերի մասնակցությունը իրանա-եվրոպական հակաթուրքական դաշինք ստեղծելու փորձերում (XVI-XVII դդ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», 1984, թիվ 9, էջ 42-52, **Պ. Լ. Զեֆյան**, Խոջա Սաֆար՝ Շահ Աբասի դեսպան Վենետիկի մեջ, «Պատմա-բանասիրական հանդես», 1983, թիվ 1, էջ 105-117, **Լ. Ս. Խաչիկյան**, Հայերը հին Մոսկվայում և Մոսկվա տանող ճանապարհների վրա, «Բանբեր Մատենադարանի», հ. 13, Եր., 1980, **Շ. Լ. Խաչիկյան**, Նոր Ջուղայի հայ վաճառականությունը և նրա առևտրատնտեսական կապերը Ռուսաստանի հետ XVII-XVIII դարերում, Եր., 1988 և այլն:

<sup>2</sup> Տե՛ս, օրինակ, **Հ. Հ. Աղախանյան**, Հայ վաճառականության տպագրական գործունեության վերագնահատության փորձ, «Բանբեր Երևանի համալսարանի», 2008, թիվ 3, էջ 67-76:

<sup>3</sup> **Հր. Գ. Միրզոյան**, XVII դարի հայ փիլիսոփայական մտքի քննական վերլուծություն, Եր., 1983, էջ 48:

ու հաղորդակցության շնորհիվ հայ վաճառականը միշտ ավելի լայն հայացք ու ըմբռնում է ունեցել, ինչը նպաստել է նրա առօրեական մտածողության ու պատկերացումների զարգացմանը: Ա. Ալպոյաճյանն, օրինակ, Նոր Ջուղայի հայ վաճառականության մասին գրել է. «Նոր-Ջուղայեցիք մէկ կողմէն Հնդկաստանի և միւս կողմէն Եւրոպայի հետ շարունակ շփում ու երթեւեկ ունենալով, տեսած են ուրիշ ազգերու զարգացումը և հայերը նույն աստիճանին հասցնելու համար, իրենց կողմէ ոչ մէկ ջանք խնայած են»<sup>4</sup>: Շրջելով ողջ Եվրոպայով մեկ՝ նրանք նաև ճաշակ են ընդօրինակել<sup>5</sup>, ինչի վառ ապացույցը հատկապես Նոր Ջուղայի գեղեցկաշեն պալատներն էին՝ նկարագարող ու ոսկեզօծ, իսկ սա չէր կարող վրիպել հետազոտողների ուշադրությունից: Սակայն հայ վաճառականության գործունեությունը հատկապես առօրեական մտածողության զարգացման տեսանկյունից ցարդ առանձին ուսումնասիրության նյութ չի դարձել:

Առօրեական մտածողության զարգացման առանձնահատկությունների ուսումնասիրությունը չափազանց կարևոր է այն պատճառով, որ հենց առօրյա գիտակցությունում տեղի ունեցող փոփոխություններն են հիմք դառնում հասարակական գիտակցության ցանկացած առաջընթացի համար, ավելին, «անհատական փորձից ծագելով, առօրեական աշխարհընկալումն ավելի քան էական դեր ունի ինչպես առհասարակ մարդկության, այնպես էլ... տվյալ ժողովրդի աշխարհայացքային կողմնորոշումներում»<sup>6</sup>: Եթե փորձենք սոցիալական փիլիսոփայության եզրույթներով ներկայացնել այս իրողությունը, պետք է նշենք, որ սա անհատականացման ու տիպականացման գործընթացի մի յուրօրինակ դրսևորում է: Չէ՞ որ հասարակական գիտակցությունը ձևավորվում է առանձին անհատների կողմից ներկայացված հայացքների ու գաղափարների հիման վրա, երբ վերջիններս ձեռք են բերում զանգվածային բնույթ: Բնականաբար, անհատական գիտակցության ամեն մի դրսևորում չէ, որ կարող է վերածվել հասարակական գիտակցության: Դրա համար անհրաժեշտ է, որ տվյալ անհատի արտահայտած սկզբունքները, մտքերն ու գաղափարները բխեն հասարակության ընդհանուր շահերից և յուրացվեն հանրության անդամների մեծամասնության կողմից: «Ձևավորվելով մասսայակերպ անհատական գիտակցության տիպականացման գործընթացից, հասարակական գիտակցությունն իր հերթին հակադարձ ազդեցություն է ունենում նոր ձևավորվող անհատական գիտակցության վրա»<sup>7</sup>: Ահա, շփվելով այլ հասարակական արժեքային համակարգերի հետ, հայ վաճառականությունը յուրացրել է այդ արժեքների ու մոտեցումների մի մասը, այսինքն՝ իրեն հետաքրքրող հարցերի շրջանակում և իր շահերի տեսանկյունից անհատականացրել է դրանք: Որոշ հետաքրքրություն առաջացնելով նաև հայ հասարակության մեջ՝ տիպականացման շնորհիվ այդ նոր մոտեցումները սկսել են համընդհանուր ուշադրության ու ընդունելության արժանանալ:

<sup>4</sup> Ա. Ալպոյաճյան, նշվ. աշխ., էջ 191:

<sup>5</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 179-180:

<sup>6</sup> Հր. Ծաֆարյան, Փիլիսոփայություն, Եր., 2005, էջ 38:

<sup>7</sup> Ա. Ա. Հովսեփյան, Սոցիալական փիլիսոփայության հիմունքներ, Եր., 2003, էջ 150:

Ուստի փորձենք սույն հոդվածում բացահայտել հայ վաճառականության ունեցած դերակատարությունը առօրյա մտածողության զարգացման գործում, տեսնել, թե որքանով և ինչպես են համաշխարհային առևտրափոխանակություն իրականացնող վաճառականները նպաստել մարդկանց առօրյա պատկերացումների փոփոխությանն ու նոր պատկերացումների ձևավորմանը, առօրյա գիտակցության զարգացմանը:

Վաճառականության մասնակցությունն առօրյա գիտակցության զարգացման գործընթացին կարելի է դիտել որպես երկշերտ գործունեություն, որպես տեսական ու գործնական մակարդակների միասնություն: Մի կողմից վաճառականները իրենք էին զարգանում, փոխվում և իրենց տեսածներն ու լսածները թղթին հանձնելով՝ փորձում տեսականորեն նպաստել առօրյա մտածողության առաջընթացին, իսկ մյուս կողմից իրենք իրենց վարքուբարքով, կենսակերպով ակամայից փոփոխություններ էին առաջացնում մարդկանց առօրյա պատկերացումներում: Բանն այն է, որ համաշխարհային առևտրին մասնակցող հայ վաճառականների ճանապարհորդությունները կարող էին տևել ամիսներ, անգամ տարիներ: Նրանք երբեմն ստիպված էին լինում բավականին երկար ժամանակ ապրել այս կամ այն երկրում: Այդ ընթացքում նրանք շփվում էին տեղի բնակչության հետ, ծանոթանում էին նրանց մշակույթին, բարքերին ու սովորույթներին: Հայ վաճառականը, բնականաբար, չէր կարող անտարբեր լինել իր տեսածների ու լսածների հանդեպ: Նրա ուշադրությունից չէին կարող վրիպել ո՛չ գիտության նորագույն ձեռքբերումները, ո՛չ հասարակական կյանքի ղեկավարման եղանակները: Վաճառականությունը չէր կարող անհաղորդ մնալ նաև տարբեր ժողովուրդների կենսակերպին, նիստ ու կացին, սովորույթներին ու բարքերին: Եվ այս ամենն իր ազդեցությունն է ունեցել վաճառականի գիտակցության վրա, ինչն էլ մեծապես նպաստել է նրանց հասարակական-քաղաքական, գիտական, փիլիսոփայական և հատկապես առօրյա պատկերացումների ձևավորմանը: Այդ են փաստում վաճառականներից մեզ ավանդված հարուստ աղբյուրները՝ օրագրություններ, հաշվեմատյաններ, դավթարներ, որտեղ նրանք շարադրել են տարբեր ժողովուրդների կենցաղին, նիստ ու կացին առնչվող հետաքրքրական դիտողություններ՝ տարբեր առիթներով արտահայտելով իրենց վերաբերմունքը այս կամ այն սովորույթի, հասարակական արժեքի վերաբերյալ, որոնք մեզ հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու վաճառականության գիտակցության աստիճանական փոփոխությունների ու զարգացման մասին:

Եվ քանի որ բազմաբնույթ այդ նյութերը հնարավոր չէ ներկայացնել մեկ հոդվածում, ուստի կանդրադառնանք հատկապես երեք վաճառականների թողած գրավոր ժառանգությանը, որոնք կարևոր դիտողություններ են պարունակում մեզ հետաքրքրող հարցերի տեսանկյունից: Առաջինն աղա Մարգար Շահրիմանյանի թարգմանությամբ ու նյութական անմիջական հովանավորությամբ տպագրված «Թուրք Չչինաց» աշխատությունն է, երկրորդը՝ պոլսահայ վաճառական Հովհաննես Թովմաճյանի ինքնակենսագրական երկը, իսկ երրորդը՝ Հովհաննես Դաշտեցու զրույց-բանավեճերը:

Աղա Մարգարը թարգմանում և 1783թ. Տրիեստում՝ Մխիթարյան միաբանության տպարանում, իր նյութական հովանավորությամբ տպագրում է

Լյուդովիկոս Քոմբեանցի «Թուղթք Չչինաց» աշխատությունը: Աղա Մարգարը Շահրիմանյան մեծանուն առևտրական տան հայտնի վաճառականներից էր և գործի բերումով քառասուն տարի շրջել էր արևելյան Հնդկաստանի տարբեր ազգերի մեջ: Առևտրական գործարքների հետ մեկտեղ նրա ուշադրությունից չէին վրիպել նաև տարբեր ազգերի ու մարդկանց հավատին, սովորություններին ու բարքերին առնչվող հարցերը: Հեղինակը գրում է, որ ամենուր «հանապազ հարց ու փորձ առնէի նոցա վասն հաւատոց, սովորութեանց, և արարողութեանց նոցա՝ որչափ կարող եղէ»<sup>8</sup>: Բայց քանի որ հոգնեցուցիչ առևտրական ճանապարհորդությունների պատճառով չափազանց քիչ ազատ ժամանակ է ունեցել ու չի հասցրել իր կուտակած գիտելիքները և հմտությունները թղթին հանձնել, օր ծերության ցավով արձանագրում է, թե «այժմ ավաղեմ զանձն իմ, զի զոր ինչ հմտացայ ի նոցանէ, ոչ եղի ի թղթի. որով գիրք մեծ կարէր լինել»<sup>9</sup>: Այսինքն՝ եթե ժամանակին կարողանար իր գիտելիքները թղթին հանձնել, ժողովուրդների բարքերի ու սովորությունների, մշակութային առանձնահատկությունների մասին պատմող մի մեծ գիրք կարող էր գրած լինել: Իսկ հիմա, երբ արդեն ժամանակ ունեւր, բայց այլևս իր տեսածներն ու լսածները նույնությամբ վերարտադրելու հնարավորություն չունեւր, որոշում է ունեցած գիտելիքներն ի սպաս դնել և թարգմանել իրեն ծանոթ մի ժողովրդի պատմություն: Այս տեսակետից արժեքավոր է համարել «Թուղթք Չչինաց»-ը, որտեղ շարադրված են մանրամասն տեղեկություններ Չինաստանի պատմության, ազնվականության, ժողովրդի բնավորության, բարքերի, լեզվի, Չինաստանում աճող բուսատեսակների ու շատ այլ առանձնահատկությունների մասին: Աղա Մարգարն ըստ էության այս աշխատությունը թարգմանել է, որպեսզի իր գործընկերներին ծանոթացնի Չինաստանի ժողովրդի մշակութային առանձնահատկություններին, նրանց բարքերի ու սովորությունների համակարգին: Չէ՞ որ այդ ամենի իմացությունն առաջին հերթին վաճառականներին էր հարկավոր: Նրանք շրջում էին երկրից երկիր և հաջող առևտուր իրականացնելու համար պետք է ծանոթ լինեին տարբեր ազգերի ու ժողովուրդների պատմությանը, բարքերին ու սովորություններին: Իսկ մյուս կողմից աշխատությունն առհասարակ նպաստում էր ընթերցողների գիտակցության զարգացմանը, այլ ժողովուրդների ու սովորությունների մասին պատկերացում կազմելուն: Եթե աղա Մարգարն արդեն հայտնի աշխատության թարգմանության ու տպագրության միջոցով էր փորձում նպաստել մարդկանց գիտակցության զարգացմանը, այլ ժողովուրդների սովորություններին ու բարքերին, ապա մեկ այլ վաճառական՝ Հովհաննես Թովմաճյանը, նույն բանն անում է իր կենսագրության, իրեն պատահած դեպքերի ու իրեն հանդիպած ժողովուրդների բարքերի նկարագրության միջոցով:

Հովհաննես Թովմաճյանը ծնվել է Կ.Պոլսում, ուսանել է Մխիթարյան միաբանությունում, ձեռնադրվել սարկավագ, բայց սոցիալական դժնդակ պայմանների թելադրանքով կարգալույծ լինելով՝ «վաճառականութեան կը

---

<sup>8</sup> Ն. Ոսկանյան, Ք. Կորկոսյան, Ա. Սավայան, Հայ գիրքը 1512-1800 թվականներին, Եր., 1988, էջ 544:

<sup>9</sup> Նույն տեղում, էջ 544:

հետեւի»<sup>10</sup>: Միայն կյանքի վերջին տարիներին նրան հաջողվում է իրականացնել վաղեմի երազանքը՝ դառնալ Մխիթարյան միաբանության անդամ, որտեղ էլ Ստեփանոս Երկրորդ Աբբա Մելքոնյանի պահանջով օր ծերության՝ 1790թ., ստանձնում է շարադրել վաճառականի աստանդական ու դժվարին կյանքի շուրջ 47 տարվա մանրամասները: Երկում անչափ հետաքրքիր ու հարուստ տեղեկություններ կան հատկապես տարբեր ժողովուրդների նիստ ու կացի, վարք ու բարքի մասին: Այն հարուստ սկզբնաղբյուր է մշակութային երկխոսությունների գործընթացի սկզբնական փուլերում վաճառականության ունեցած դերակատարության վերլուծության տեսանկյունից<sup>11</sup>: Իսկ մշակութային երկխոսությունների գործընթացը հնարավոր չէ պատկերացնել առանց գիտակցության և մասնավորապես առօրյա պատկերացումների փոփոխության ու զարգացման: Ուստի Թովմաճյանի երկում բավականին հետաքրքիր տեղեկություններ ենք գտնում նաև մեզ հետաքրքրող հարցերի տեսանկյունից: Չէ՞ որ «համաշխարհային շրջիկ հայ խոջաները ժողովուրդների, մշակույթների, պետական զանազանակերպ կազմվածքների հետ իրանց ունեցած անդադրում հանդիպումների մեջ չեյին մնում անտարբեր ու անզգա դեպի իրանց տեսածներն ու լսածները»<sup>12</sup>: Այսպես, զանազան ապրանքների առք ու վաճառքին զուգընթաց վաճառականները նաև գիտելիքներ ու պատկերացումներ էին փոխանակում միմյանց հետ: Օրինակ, Հովհաննես Թովմաճյանն իր հետ Հաբեշստան էր տարել մեծ քանակությամբ ակնեղեն, քանզի կանխավ չէր իմացել, որ այստեղ նույնիսկ պալատականները գրեթե պատկերացում չունեին թանկարժեք ակնեղենի, օրինակ՝ ադամանդի մասին: Երբ հայ վաճառականը պալատականներին ցույց է տալիս թանկարժեք ադամանդները, իր ակնկալած «բեռ մի ըղտոյ ոսկոյ»<sup>13</sup> փոխարեն նրան ոչ միայն ծաղրում, այլև զրպարտում են: Տեղի բնակիչները Թովմաճյանի ներկայացրածն ընկալում են իբրև «սպիտակ մարդկանց հերթական խորամանկություն»՝ ադամանդը համարելով լավ հղկված, բայց էժանագին ապակի, իսկ ականակուռ երախակալի մարջանները՝ ներկած ոսկորներ: Տեսնելով Թովմաճյանի հուսահատությունն ու հիասթափությունը՝ Իթեկե թագուհին հանդիմանում է պալատականներին՝ «ոչ ճանաչելով զակունսն զայդպիսի գռեհկական բանս խօսելով՝ դուք զճեզ խայտառակեցիք»<sup>14</sup>, ու մխիթարում Թովմաճյանին. «յիրաի ի թագաորութեան մերում ոչ գործածեն զայսպիսի ակունս և վասն այն ես ոչ ճանաչեն»<sup>15</sup>: Ահա, ուրեմն, մի կողմից Թովմաճյանը ապրանքաճանաչողություն է իրականացնում՝ նպաստելով հատկապես մադկանց ճաշակի ձևավորմանը,

<sup>10</sup> «Հ. Յովհաննես Թովմաճյանի ուղեորությունն Յեթովպիա», «Բազմավեպ», 1937, թիւ 6-9, էջ 138:

<sup>11</sup> Տե՛ս **Հ. Հ. Աղախանյան**, Հայ վաճառականության դերը ժողովուրդների շփման ու փոխհարստացման գործընթացում, «Բանբեր Երևանի համալսարանի», 2008, թիվ 1, էջ 176-185:

<sup>12</sup> **Լեո**, նշվ. աշխ., էջ 94:

<sup>13</sup> «Հ. Յովհաննես Թովմաճյանի ուղեորությունն Յեթովպիա», էջ 148:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 149:

<sup>15</sup> Նույն տեղում:

իսկ մյուս կողմից՝ սեփական կյանքի դառը փորձով բացահայտում է տարբեր ազգերի ու ժողովուրդների ճաշակների ու պատկերացումների տարբերությունները, հասկանում, որ Եվրոպայում այնքան ընդունելի ակնեղենն այստեղ իրենից գրեթե ոչինչ չի ներկայացնում: Այս բնագավառում ձախողվելով, սակայն, Թովմաճյանը չի հուսահատվում՝ շուտով վաճառքի առարկա դարձնելով իր գիտելիքները: Տեսնելով, որ մարդիկ չեն կարողանում թվաբանական ու հաշվապահական պարզագույն գործողություններ կատարել, որոշում է նրանց փոխանցել իր ունեցած գիտելիքները, ինչի շնորհիվ արժանանում է անգամ տեղի թագուհու ուշադրությանը, նշանակվում պալատական գանձապահ: Բացի այդ՝ նա կենցաղային մի շարք մանրուքներ է ուսուցանում միսը հում չուտելու, օճառի օգտագործման և այլնի վերաբերյալ: Այս ամենը, բնականաբար, չէր կարող անհետևանք մնալ տեղի բնակչության համար: Աշխարհով մեկ շրջած հայ վաճառականի հաղորդած նորությունները պիտի նպաստեին նրանց գիտակցության աստիճանական զարգացմանը, առօրյա պատկերացումների փոփոխությանը:

Ավելին, հայ վաճառականն իր այս գործունեությամբ պիտի նպաստեր նաև հայի կերպարի ձևավորմանը: Եվ իրոք, հայ վաճառականները մեծապես նպաստել են հայ ժողովրդի մասին հասարակական բարյացակամ վերաբերմունք մշակելու գործին: Աշխարհագրական դետերմինիզմի հիմնադիր, ֆրանսիացի մեծ մտածող ու հումանիստ Շառլ Լուի Մոնտեսքյոն իր «Պարսկական նամակներ» աշխատությունում, օրինակ, բազմիցս ընդգծում է հայ վաճառականի և առհասարակ հայ մարդու առաքինությունները<sup>16</sup>: Այնքան վստահելի ու արդարամիտ են եղել հայ վաճառականները, որ նրանց միջոցով Չմյուռնիայից Սպահան էին ուղարկվում անգամ անձնական բնույթի նամակներ: Հայ մարդու հանդեպ համակրանքն էլ ավելի է մեծանում, երբ կարդում ենք Ափերիդոնի և Աստարտայի սիրավեպը, որտեղ հատկապես շեշտվում է հայ վաճառականի գթասրտությունը<sup>17</sup>: Փաստորեն վերջիններիս շնորհիվ էր ֆրանսիացի մեծ լուսավորչի ու հումանիստի մոտ հայ ժողովրդի մասին այդպիսի դրական վերաբերմունք ձևավորվել, որը, բնականաբար, մեծ ազդեցություն է ունեցել ընթերցողների շրջանում մեր ժողովրդի մասին առհասարակ բարյացակամ վերաբերմունքի ձևավորման գործում: Եթե Ֆրանսիայում հայ վաճառականության մասին պատկերացումների խտացված արտահայտությունը տեղ է գտել Մոնտեսքյոյի աշխատությունում՝ նպաստելով առհասարակ հայ մարդու մասին դրական կարծիքի ձևավորմանը, ապա Գերմանիայում այդ գործընթացին նպաստել է հատկապես գերմանական դասական փիլիսոփայության կարկառուն ներկայացուցիչ Իմանուիլ Կանտը՝ հայերին համարելով խելացի ու աշխատասեր ժողովուրդ, «ժողովուրդ, որը հյուսիս-արևելքից հարավ-արևմտյան ուղղությամբ անցնում է գրեթե ողջ հին աշխարհը և կարողանում է ջերմ ընդունելություն գտնել այն բոլոր ժողովուրդներից, ում մոտ լինում է»<sup>18</sup>: Ինքնին

<sup>16</sup> Տե՛ս, օրինակ, **Հր. Ղ. Միրզոյան**, Մոնտեսքյոն հայերի և Հայաստանի մասին, «Նորք», 1989, թիվ 7, էջ 137-143, **Հր. Ղ. Միրզոյան**, Մոնտեսքյոն և մենք, «Մանկավարժ», 1990, թիվ 7, էջ 53-62:

<sup>17</sup> Տե՛ս **Մ. Լ. Մոնտեսքյե**, *Персидские письма*, М. 1956, էջ 164:

<sup>18</sup> **И. Кант**, *Сочинения*, М., 1966, т. 6, с. 572-573.

հասկանալի է, որ համաշխարհային փիլիսոփայության պատմության խոշորագույն ներկայացուցչի կողմից հնչեցված այս մտքերը մեծապես նպաստել են առհասարակ մեր ժողովրդի մասին դրական վերաբերմունքի ձևավորմանը:

Այսպիսով, իրենց տնտեսական հիմնական գործառույթին զուգահեռ հայ վաճառականները նոր գիտելիքներ ու հայացքներ էին ձեռք բերում, այդ ամենն անցկացնում էին իրենց գիտակցության պիրզմայով՝ փոխվելով գաղափարապես, ինչպես նաև նպաստում էին մարդկանց առօրյա գիտակցության բարձրացմանը, իրենց մասին հասարակական կարծիքի ձևավորմանը:

Նշված գործընթացներն առավել տեսանելի էին դառնում հատկապես այն ժամանակի առևտրական տներում կամ քարվանսարաններում: Բանն այն է, որ երբ առևտրական երկարատև ճանապարհորդություններից վաճառականները կանգ էին առնում առևտրական տներում կամ քարվանսարաններում հանգստանալու, ընդհանուր գրույցների ժամանակ քննարկում էին նաև ժամանակի միտքը հուզող մի շարք կարևորագույն հարցեր, փորձում լուծումներ առաջարկել: Այս առումով առևտրական տներն ու քարվանսարանները ոչ միայն տնտեսական գործարքներ կնքելու, հոգնեցուցիչ ճանապարհորդություններից հետո կարճատև դադար առնելու վայրեր էին, այլև գիտամշակութային յուրօրինակ օջախներ, որտեղ հանդիպում էին տարբեր կրոնների, գիտելիքների, լեզուների, մշակույթների, բարբերի ու սովորույթների տեր մարդիկ: Նրանք հաճախ կազմակերպում էին գիտական, կրոնական, փիլիսոփայական, բարոյագիտական ու գեղագիտական գանազան հարցերի շուրջ բանավեճեր, քննարկում ժամանակի մարդկային միտքը հուզող խնդիրներ, տալիս ու ստանում պատասխաններ, որոնք այլ պայմաններում ու այլ հանգամանքներում նույնիսկ անհնար էր երևակայել: Այս ամենն, անշուշտ, նպաստում էր մարդկանց մտածողության զարգացմանն ու գիտակցության փոփոխությանը: Չէ՞ որ քարվանսարանները յուրահատուկ «չեզոք գոտիներ» էին, որտեղ կարելի էր առանց նախապաշարմունքների, առանց կրոնական կաղապարների գրուցել ցանկացած հարցի շուրջ, և որտեղ ամեն ոք իրեն զգում էր անհամեմատ ավելի ազատ, քան իր հայրենի երկրում ու սեփական տանը: Ճիշտ է, 17-18-րդ դարերում եվրոպական առանձին երկրներում (Հոլանդիա, Անգլիա, Ֆրանսիա և այլն) արդեն տիրապետող էր դառնում խղճի ու մտքի ազատության սկզբունքը, իսկ «սալոններում» ազատորեն հնարավոր էր քննարկել ամենատարբեր հարցեր, բայց դա միանշանակ բացառված էր աֆրիկյան և ասիական երկրներում, ուր անսասան էր միջնադարականությունը՝ բռնակալությունն ու կրոնական մոլեռանդությունը<sup>19</sup>:

Քարվանսարաններում տեղի ունեցող քննարկումների մասին պատկերացում կազմելու տեսանկյունից անփոխարինելի է 17-18-րդ դարի հանրահայտ վաճառական, հրապարակախոս-բանաստեղծ Ստեփանոս Դաշտեցու թողած գրավոր ժառանգությունը: Դաշտեցին ծնվել է 1653թ., սկզբնապես

---

<sup>19</sup> Այդ մասին տե՛ս **Հր. Ղ. Միրզոյան**, Ստեփանոս Դաշտեցու «Զրույց-բանավեճերի» պատմամշակութային արժեքը, «Բանբեր Երևանի համալսարանի», 1995, թիվ 3, էջ 106-107:

եղել է հոգևորական, ունեցել է «գաստիճան սարկաւագութեանն», սակայն սոցիալ-քաղաքական ծանր պայմանների հարկադրանքով ստիպված է եղել «եկեղեցականի ավետարանն ու խաչը փոխարինել վաճառականի համրիչով և «ի գործ ապականացուս» դեզերել աշխարհի տարբեր լայնություններով»<sup>20</sup>: Առևտրականի բազմազբաղ գործին զուգահեռ Դաշտեցին ստեղծել և գալիք սերունդներին է թողել գրական հարուստ ժառանգություն: Իրեն հետաքրքրող աստվածաբանական ու վիճաբանական հարցերի վերաբերյալ մոտեցումները Դաշտեցին շարադրել է «Մախաղ փշրանաց», «Կոչնակ ճշմարտութեան» և «Խնդիր ուղղութեան կամ ճշմարտութեան» վիճաբանական երկերում: Բացի այդ՝ հեղինակ է նաև 17 տաղերի, ուր «իր գործածած բառերն ու բացատրութիւնները մերթ ամէն բանէ առաջ կարծէք առաքելութիւն ունին աղաղակելու քերականն ու տրամաբանը, որ իր մէջ պատուոյ տեղը գրաւած էին»<sup>21</sup>: Այսքանով, սակայն, Դաշտեցու գրական ժառանգությունը չի սպառվում: Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց միաբանության թիվ 346 ձեռագիրն ուսումնասիրելիս Հր. Ղ. Միրզոյանը պարզել է, որ Ստեփանոս Դաշտեցին հեղինակ է նաև յոթ գրույց-բանավեճերի, որոնք պատմում են վաճառականի աստանդական կյանքի ընթացքում տարբեր անձանց հետ նրա ունեցած քննարկումների մասին: Ավելին, օրինակ 5-րդ գրույց բանավեճից պարզվում է, որ հրապարակախոս ու բանաստեծ, ինչպես նաև հմուտ երաժիշտ<sup>22</sup> Ստեփանոս Դաշտեցին նաև գեղանկարչական բացառիկ ընդունակություններ է ունեցել: Նկատի առնելով յոթ գրույց-բանավեճերի պատմամշակութային արժեքը՝ Հր. Ղ. Միրզոյանը դրանցից երեքը հանձնել է ընթերցողների դատին<sup>23</sup>:

Դաշտեցու գրուցակիցները պարսիկ-մահմեդական վաճառականներ են, շեյխեր, փիլիսոփաներ, բանաստեղծներ, մահմեդականացած հայեր: Բանավեճի առարկա են հանդիսացել փիլիսոփայական, կրոնական, բարոյագիտական, գեղագիտական և այլ կարգի հարցեր: Բանավեճերի ընթացքում քննարկված հարցերը, նրանց տրված պատասխանները մեզ հնարավորություն են ընձեռում ոչ միայն պատկերացում կազմելու 17-18-րդ դարի սահմանագծում պարսից իրականության հասարակական-քաղաքական և գաղափարական-մշակութային մթնոլորտի մասին, այլև այն, որ վաճառականությունը մեծ նշանակություն է ունեցել ժողովուրդների միջև փոխըմբռնման ու փոխհանդուրժողականության մթնոլորտ ստեղծելու գործում: Հանդուրժողականության մթնոլորտի առկայության լավագույն դրսևորումներից է առաջին գրույց-բանավեճը, որտեղ Դաշտեցին, նկատելով իր ու գրուցակցի միջև գաղափարական սկզբունքային տարբերություններ, գրում է. «Կամ ոչ

<sup>20</sup> Հր. Ղ. Միրզոյան, Դաշտեցու գրական ժառանգության հարցի շուրջ, «Մովետական գրականություն», 1988, թիվ 11, էջ 134:

<sup>21</sup> Սիմոն Սիմոնեան, Նորայայտ տաղասաց մը՝ Ստեփանոս Դաշտեցի: Ուսումնասիրութիւն և տաղեր, Տպարան Սեան, Պեյրութ, 1981, էջ 15:

<sup>22</sup> Տե՛ս Հր. Ղ. Միրզոյան, Դաշտեցու գրական ժառանգության հարցի շուրջ, էջ 134:

<sup>23</sup> Տե՛ս Հր. Ղ. Միրզոյան, Ստեփանոս Դաշտեցու «Չրույց-բանավեճերի» պատմամշակութային արժեքը, էջ 106-119, Հր. Ղ. Միրզոյան, Ստեփանոս Դաշտեցու առաջին «Չրույց-բանավեճը», «Բանբեր Երևանի համալսարանի», 1997, թիվ 3, էջ 89-100:

առարկել ընդդեմ մեր ձեզ ազնուամեծաց երջանկացոյ զվիճաբանութիւնս հաւատոյ և կամ մի՛ երբէք ցասնուլ կամ դաւել զմեզ գոր ոչ երբէք մեղաք ձեզ: Քանզի դիտաւորութիւն երկոցունցս ոչ այլ ինչ է, եթե ոչ իմանալ զնորագոյնս ինչ, վասն զի ոչ դուք կարէք թողուլ զբողոք սրտէ ընդդէմեալ և ի նմա սեւեռեալ հաւատն ձեր, և ոչ ես կարեմ տանել և բոլորովիմբ հետևիլ հաւատին ձերոյ, ի բաց մերկանալով ի սիրոյն Քրիստոսի Փրկչին մերոյ»<sup>24</sup>: Փոխարենը Դաշտեցին ստանում է հետևյալ պատասխանը. «Մեր ևս լաւ գիտեմք զայդցանէ, զի ոչ մեր զքեզ առ մեզ դարձուցանել կարեմք կամաւ և ոչ դու զմեզ ի յօրինացն մերոց ամենևին, սակայն բանականին է գործ միշտ արծարծել զգիտութիւնն, վասն որոյ դիտաւորութիւն մեր: Ուրեմն կարեմք բացասել յստորասութեանց միմեանց: Նա՛ ևս ոչ է կանոն իմաստասիրաց կամ փիլիսոփայից ցասնուլ իրերաց և կամ պահել զոխս ի սակս վիճաբանութեանցն. որ հայիցի միշտ ի յիմաստասիրելն»<sup>25</sup>: Այս փոքրիկ երկխոսությունն անգամ բավական է պատկերացում կազմելու քարվանսարաններում տիրող հանդուրժողականության մթնոլորտի մասին: Չէ՞ որ այլ պայմաններում նրանք կարող էին գաղափարական երդվյալ հակառակորդներ լինել, որոնք կիրաժարվեին ցանկացած պայմաններում երկխոսության գնալ դիմացինի հետ: Բայց քարվանսարաններում տիրող մթնոլորտը, այն միտքը, որ նրանցից և ոչ մեկը իրավիճակի տերը չէ, ոչ ոք մյուսին ստորադաս չէ, նրանց տրամադրում է, որպէսզի փորձեն հասկանալ միմյանց, պարզել, թե ինչն է իրենց միջև այդ մեծ անդունդն առաջացնող հակասությունների հիմքը: Միևնույն ժամանակ, երկուստեք քաջ գիտակցում են, որ դիմացինին սեփական հայացքներից հրաժարվել համոզել չեն կարող, և դա նրանց բանավեճի նպատակներից դուրս է: Նրանց նպատակն ուղղակի իմաստասիրելն է, «զնորագոյնս ինչ» իմանալը: Իսկ այս ամենը չէր կարող անհետևանք մնալ և որևէ փոփոխություն չառաջացնել զրուցակիցների մտածելակերպում: Չէ՞ որ վերջին հաշվով ցանկացած բանավեճի նպատակը մարդկանց գիտակցությունում որոշակի կադապարներ կոտրելն է, հարցերին այլ տեսանկյուններից նայելու կարողություն զարգացնելը:

Այսպիսով, երկարատև ու հոգնեցուցիչ առևտրական ճանապարհորդությունների կարճատև հանգստի պահերին առևտրական քարվանսարանները վերածվում էին մշակութային երկխոսությունների յուրօրինակ օջախների, որտեղ քննարկվում էին չափազանց հետաքրքիր և նույնիսկ այնպիսի տեսական հարցեր, որոնք մինչ օրս էլ գտնվում են համապատասխան մասնագետների ուշադրության կենտրոնում: Այս տեսանկյունից հետաքրքրական է Դաշտեցու հինգերորդ գրույց-բանավեճը, որը վերնագրված է «Հարցումն ինչ վասն գինոյ», ուր հետաքրքիր զուգահեռներով ներկայացվում են միևնույն հարցերի վերաբերյալ քրիստոնեության ու իսլամի տարբեր տեսանկյունները: Հարցը, որն այդ գրույց-բանավեճի առանցքն է կազմում, վերաբերում է գինուն: Իսլամն արգելում է գինու օգտագործումը, ուստի մահմեդական զրուցակիցների հարցին, թե ինչպէս է քրիստոնեությունը թույլատրում այն ընկել, որը հանգեցնում է մի շարք բացասական

<sup>24</sup> Հր. Ղ. Միրզոյան, Ստեփանոս Դաշտեցու առաջին «Զրույց-բանավեճը», էջ 91:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 91:

հետևանքների, Դաշտեցին զայրացած պատասխանում է, որ զինու չա-  
րաշահումից առաջ եկած հետևանքները պատճառն են ոչ թե զինու օգտա-  
գործման, այլ չափի կորստի: Ավելին, «ոչ թե միայն զինին, որ ի կիր առնու-  
ցու ոք արտաքոյ կոպարին, միայնակ իցե պիղծ, այլև ամենայն կերակուրք  
և ընպելիք, զորս հանդգնաբար և մոլեքնաբար առնուցուծք ի կիր և սաստիկ  
տենչանօք յղփանայցենք նոքօք, ուստի ծնանիցին ի նոցունց վաշվաշ տրոփ-  
մունք մինչ ի դուռն բղչախոհութեան, որ է վնաս առ ի ապաստամբումն ի  
բանականութենէ մասինն»<sup>26</sup>: Աստծո ստեղծած յուրաքանչյուր երևույթ՝  
բույս ու կենդանի, ինքնին պիղծ չեն, եթե օգտագործվեն «զչափատրն և  
զբաւականն»<sup>27</sup>: Այս խրատաբանական գրույցն իր բովանդակությամբ շատ  
ավելի խորն է, քան կրոնական-դավանաբանական վեճը: Դաշտեցին ըստ  
էության կոչ է անում չկորցնել չափի գիտակցումը և հասկանալ, որ մեղքը  
կերակրի կամ առհասարակ որևէ երևույթի մեջ չէ ինքնին, այլ այդ ամենին  
գերի դառնալու: Այս մասին է փաստում նույն գրույց-բանավեճում նկա-  
րագրված մեկ այլ դրվագ, ուր Դաշտեցին գրուցակցին փորձում է ապացու-  
ցել, որ ինչպես զինու օգտագործումն արգելելը, այնպես էլ մարդկային կեր-  
պարանքներ պատկերելը ինքնին մեղք չեն: Եվ քանի որ Դաշտեցին հրա-  
պարակախոս-վաճառական ու բանաստեղծ լինելուց զատ նաև գեղանկար-  
չական ձիրք ունեւ, նրա գրուցակից մեծահարուստ Շեյխը բողոքում է, թե  
իրեն բազմիցս խոստացել է հյուր գնալ ու եղեմական պարտեզը նկարել սո-  
վորեցնել, բայց դեռևս խոստումը չի կատարել: Դաշտեցին համաձայնում է  
և առաջարկում Շեյխին դիմանկարել: Վերջինս հրաժարվում է՝ մեկնաբա-  
նելով, որ դա իրենց կրոնն արգելում է, քանի որ հանգեցնում է կուռքարա-  
րության: Ինչպես զինին հարբեցողության, անախորժությունների, վեճերի  
ու մարդասպանությունների պատճառը չէ, այնպես էլ պատկերահանությու-  
նը կուռքարարության պատճառը չէ: «Արգելու Աստուած գլուսապաշտու-  
թիւնն և ոչ պատկերահանութիւնն»<sup>28</sup>, - պատասխանում է Դաշտեցին: Պետք  
է կարողանալ «ըստ նորք հայեցողութեանն»<sup>29</sup> տեսնել ու բացահայտել  
երևույթների բուն պատճառները:

Դաշտեցու այս և մյուս պատասխանների ենթատեքստում կարելի է  
նշմարել նրա գաղափարական կողմնորոշումներն առհասարակ: Մի կող-  
մից մեր վաճառականն ազգային գիտակցության բարձր մակարդակ ունեւ,  
ինչի վառ ապացույցը իր տաղերից մեկում տեղ գտած հետևյալ միտքն է.  
«Է՞ր զիս կամիս փոփոխել, Երբ իմ մորէս Հա՛յ ելի»<sup>30</sup>: Բայց մյուս կողմից աս-  
տանդական կյանքի դժվարին փորձը նրան հանգեցնում է այն գիտակցու-  
թյանը, որ երևույթների էությունը հասկանալը և հաջողության գրավականը  
«նորք հայեցողությունն է», քննադատական վերլուծությունը և հանդուրժ-  
ողականությունը: Այդ պատճառով էլ հարմար առիթը բաց չի թողում իրեն հու-  
զող հարցերի շուրջ տեսական-բանական քննարկումներ, փիլիսոփայական

<sup>26</sup> Հր. Ղ. Միրզոյան, Ստեփանոս Դաշտեցու «Ջրույց-բանավեճերի» պատ-  
մամշակութային արժեքը, էջ 110:

<sup>27</sup> Նույն տեղում, էջ 111:

<sup>28</sup> Նույն տեղում, էջ 112:

<sup>29</sup> Նույն տեղում, էջ 113:

<sup>30</sup> Միմոն Միմոնեան, նշվ. աշխ., էջ 18:

բանավեճեր կազմակերպել: Հասկանալիորեն բոլոր գրույց-բանավեճերի հիմնական թեման քրիստոնեական ու մահմեդական կրոնների սկզբունքների տարբերությունների, դրանց փոխհարաբերության հարցն է: Չէ՞ որ յուրաքանչյուր դարաշրջան առաջադրում ու թելադրում է իր հարցերը: Իսկ հարցերի քննարկումն ի վերջո հանգեցնում էր երկխոսության արվեստին տիրապետելուն, փոխհանդուժողականության ու փոխըմբռնման մթնոլորտի ստեղծմանը, վերջին հաշվով այն նպաստում էր նաև վաճառականության առօրյա գիտակցության բարձրացմանը և տեսական պատրաստվածության աճին:

Բայց հասարակական գիտակցության վրա վաճառականությունն ազդում էր ոչ միայն և ոչ այնքան իր տեսական պատրաստվածությամբ, որքան իր տեղափոխած ապրանքներով, իր կերպարով, առօրյայով, կենսակերպով, վարք ու բարքով:

Այս առումով հատկապես մեծ է եղել մանրավաճառների դերակատարությունը, քանի որ վերջիններս անմիջապես ժողովրդի հետ էին շփվում<sup>31</sup>: Մանրավաճառների տեղափոխած նոր ապրանքատեսակները, որոնք մինչ այդ անծանոթ էին մարդկանց, մեծապես նպաստել են նրանց կենցաղի ու առօրյա գիտակցության փոփոխությանը: Գրականության մեջ բավականին շատ են տեղեկություններն այն մասին, որ հայ վաճառականները շատ երկրներում դարձել են նոր ապրանքատեսակների, մշակաբույսերի ներմուծողը: Օրինակ, Հովհաննես Ալթունյանը (Ժան Ալթեն) 18-րդ դ. Ֆրանսիայում մի ինքնատիպ նորարար էր, որը թեև ոչ բարենպաստ կլիմայական պայմանների պատճառով տապալել էր բամբակի աճեցման մի քանի փորձերը, այնուամենայնիվ տորոնի աճեցման գործընթացում կարողացավ հասնել որոշակի հաջողությունների: Ի պատիվ նրա՝ ֆրանսիացի բուսաբան Պետին տորոնն անվանել է *Althenic*, իսկ Վոկլյուզի շրջանում դրվել է նրա արձանը, որն առ այսօր կանգուն է<sup>32</sup>: Հ. Քյուրտյանն էլ ենթադրում է, որ հայերն առաջինն էին, որ Լեհաստան մետաքս բերեցին և լեհերին ծանոթացրին մետաքսագործությանը<sup>33</sup>: Հայ վաճառականների տեղափոխած որոշ արևելյան մթերքներ Լվովում անվանվում էին «հայկական ապրանք»: Այդպիսի ապրանքների թվում էին գինին, համեմունքները, ձեթը, թեյը, սուրճը և այլն: Ավելին, ենթադրվում է, որ ի թիվս այլ ապրանքների, Եվրոպա սուրճ առաջին անգամ ներմուծել են հենց հայ վաճառականները: Նրանք երբեմն զբաղվել են նաև թմրեցուցիչների առևտրով, ավելին՝ դրա ռահվիրաներն են

<sup>31</sup> Ի դեպ, մանրավաճառները ժողովրդի հետ ավելի անմիջական շփման հնարավորություն ունեին նաև այն պատճառով, որ նրանք առհասարակ տնտեսական, քաղաքական հարցերից վեր էին, հետևապես, ժողովուրդը նրանց հեշտությամբ էր վստահում, կիսում իր դարդն ու ցավը: Պատահական չէ, որ իր հանդեպ ժողովրդի ունեցած վերաբերմունքը բացահայտելու համար.

«Իբրև թե չարչի մի թափառական,

Չարչու կերպ մըտած, ինչպես վիշապ օձ,

Անցնում էր ինքը՝ Շահ-Աբաս արքան»: (Հովհ. Թումանյան, Թագավորն ու չարչին, Երկեր, Հատոր առաջին, Եր., 1958, էջ 274)

<sup>32</sup> Այդ մասին տե՛ս **Անրի Միշել**, Հայազգի Ժան Ալթենը՝ Ֆրանսիայում բամբակի և տորոնի մշակության առաջնել, «Պատմա-բանասիրական հանդես», Եր., 2000, թիվ 2, էջ 188-195:

<sup>33</sup> Տե՛ս **Հ. Քյուրտյան**, Գորգը հայոց մօտ, Վենետիկ, Ս. Ղազար, 1947, էջ 84:

եղել, ինչպես նաև ծխախոտի գործածությունը տարածողները<sup>34</sup>:

Նոր ապրանքատեսակներն ու մշակաբույսերը, բնականաբար, մարդկանց կենցաղի հետ մեկտեղ փոխում էին նաև նրանց պատկերացումները, առօրյա գիտակցությունը: Բայց մյուս կողմից ոչ միայն և ոչ այնքան վաճառականների տեղափոխած ապրանքներն էին ազդում մարդկանց մտածողության վրա, որքան նրանց կերպարն ինքնին, նրանց վարքուբարքը: Ու քանի որ վաճառականների վարքը հիմնականում «չէր առանձնանում բարձր բարոյականությամբ»<sup>35</sup>, ապա հատկապես այսպիսի երևույթը ժողովրդի ուշադրությունից վրիպել չէր կարող: Ասվածի վառ ապացույցը տեսնում ենք Գրիգոր Դարանաղցու «Ժամանակագրութիւն» աշխատության մեջ:

Հնարավորինս մանրամասն ներկայացնելով իր ժամանակի կարևորագույն իրադարձությունները՝ Դարանաղցին առհասարակ խիստ քննադատում է վաճառականության վարք ու բարքը: Չէ՞ որ հարստանալու անհագ մոլուցքին տրված՝ վաճառականների շրջագայությունները կարող էին տևել ամիսներ, անգամ տարիներ, իսկ նրանց ընտանիքներն այդ ընթացքում մնում էին բարձիթողի վիճակում, մատնված միայնության ու անտերության: Շրջելով գրեթե ողջ աշխարհով, ասում է Դարանաղցին, նրանցից շատերը այդպես էլ տուն չէին վերադառնում, քանի որ կա՛ն լքում էին իրենց ընտանիքները, վերաբնակվում այլ վայրերում՝ այլ ընտանիքներ կազմելով, կա՛ն էլ մահանում էին օտարության մեջ: Վաճառականների մի մասն էլ երկարատև ճանապարհորդություններից ֆիզիկապես հյուծվում էր ու տուն վերադառնում գրեթե հաշմանդամ դարձած: Դարանաղցին հատկապես զայրուքով է խոսում այն վաճառականների մասին, որոնք «ոչ զպաս գիտելով եւ ոչ զուտիսն, ոչ թէ կարի յօտարոտոց անհաւատից միջումն եւ յանձանօթ հեռագոյն աշխարհի ուրեք, այլ ի մերում աշխարհի առնելով զայթակղութիւն ոմանց»<sup>36</sup>: Ճիշտ է, ամեն դեպքում այսպանելի է անբարոյական ու ոչ առաքինի կենսակերպը, բայց առավել պախարակելի է, երբ այն սեփական հայրենիքում, սեփական տանն է իրականություն դառնում: Լինելով հոգևորական՝ Դարանաղցին առաջին հերթին հայ է, որի համար ազգային արժեքները, առաքինությունները վեր են ամեն ինչից, և այստեղ ականատես ենք լինում նրա մտածողության երկփեղկմանը: Ահա, դրսում՝ «յանձանօթ հեռագոյն» աշխարհներում, վաճառականների վարքը կարծես նրան այնքան էլ չի հետաքրքրում, ուստի հատկապես շեշտադրում է սեփական տունը, ընտանիքը մաքուր պահելու պահանջը: Այս առնչությամբ նա պատմում է Մեծ Պահքի շրջանում Ակն քաղաքում իջևանած ջուղայեցի վաճառականների մասին, որոնք կերուխումով, արբեցողությամբ ու աշխարհիկ երգերով լուծել էին Պահքը: Արդյունքում «բոլոր գիւղն՝ մեծ եւ փոքր զամէնքն խռովեցուցին ի կարծիս *թերահաւատութեան արկանելով* (ընդգծումը իմն է - Հ. Ա.) որ եկին առ մեզ գլխաւոր գեղջն եւ հարցին, թէ՛ գիտա՞կ ես այտոնք ի՞՞նչ ազգ են, լեզու հայերէն խօսին եւ գործովք անօրէնք են»<sup>37</sup>: Ահա, ուրեմն, վաճառականներն իրենց կենցաղով, կենսակերպով ոչ

<sup>34</sup> Տե՛ս Ա. Ալմոյաճեան, նշվ. աշխ., էջ 262:

<sup>35</sup> **В. Перхавко**, Первые купцы российские, М., 2004, с. 89.

<sup>36</sup> **Գր. Դարանաղցի**, Ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1915, էջ 460:

<sup>37</sup> Նույն տեղում, էջ 460:

միայն սեփական առողջությունն ու ընտանիքները կարող էին քայքայել, այլև կարող էին թերահավատություն, կասկած սերմանել ավանդապահ ժողովրդի մոտ իրենց դարավոր ավանդույթների ու սովորույթների վերաբերյալ: Այնքան մեծ է լինում գյուղացիների զարմանքն ու հետաքրքրությունը հայալեզու վաճառականների այդ «նոր» բարքերի հանդեպ, որ Դարանաղցուն չի հաջողվում գյուղացիներին համոզել հեռու մնալ հարստությունից հղփացած այդ թերահավատ, որկրամոլ ու որովայնապաշտ մարդկանցից: Նրանք աղաղակում են. «մեր կին եւ տղայքն ամէնքն ծոմապաս եւ միաճաշակ կու պահենք, նա՛ դոքա թերահաւատեցուցին զմեր ժողովուրդն»<sup>38</sup>, ուստի «կամ մեզ այլ նոցա նման հրաման տուէ՛ք, կամ նոցա հախէն եկէ՛ք»<sup>39</sup>: Այնուհետ Դարանաղցին պատմում է մի ջուղայեցի վաճառականի՝ Խաչատուրի մասին, որը ընտանիք ու երեխաներ ուներ, բայց մի ռուս աղախին էր գնել՝ «շնութեան համար հետն շրջեցուցանելով ի մէջ բազմամբոխ վաճառականաց»<sup>40</sup>: Այս անգամ ևս գյուղացիները գալիս Դարանաղցուն բողոքում են, որ կամ մի ճար անի իրենց այդ արատավոր երևույթից ազատելու համար, կամ էլ իրենց ևս թույլատրի նման կյանք վարել: Արդյունքում Դարանաղցին բանադրում է այդ վաճառականին, ինչը, իհարկե, մարդկանց թերահավատությունն ու կասկածները չի փարատում, քանզի այդպիսի երևույթներ չափազանց շատ էին հանդիպում: Փաստորեն, այսպիսի երևույթների շնորհիվ մարդկանց գիտակցությունում թերահավատություն էր սերմանվում, աստիճանաբար սկսում էին նոր խմորումներ տեղի ունենալ հասարակական տարբեր երևույթների, նրանց գնահատման սկզբունքների ու չափանիշների վերաբերյալ:

Վերը նկարագրված երկու դեպքերն էլ խոսում են այն իրողության մասին, որ վաճառականը սեփական վարքուբարքով, կենցաղով կարող էր մարդկանց գիտակցության մեջ շատ արագ և շատ լուրջ փոփոխություններ առաջացնել: Պահքը լուծելով՝ վաճառականները կասկածի տեղիք են տալիս մարդկանց մոտ: Ինչո՞ւ պետք է իրենք 49 օր շարունակ իրենց գրկեն գինուց ու զվարճանքներից, ինչու պիտի վաճառականներին թույլատրվի գինի գնել և խորխուճանքներ կազմակերպել, իսկ իրենց, որ արդար աշխատանքով գինի են վաստակել, դրա օգտագործումը չպետք է թույլատրվի:

Այսպիսով, հայ վաճառականության գործունեությունը միայն տնտեսականով չէր սահմանափակվում: Ինչպես մեղուն ծաղիկներից նեկտար հավաքելիս զուգահեռաբար, իր կամքից անկախ նաև փոշոտում է ծաղիկները, բնության կարգի ու շարունակականության պահպանման տեսանկյունից գուցե շատ ավելի կարևոր գործ անելով, նմանապես և հայ վաճառականը իր տեղափոխած ապրանքներով, սեփական կենսակերպով, վարքուբարքով իր կամքից անկախ, օբյեկտիվորեն նպաստում էր բարքերի փոփոխությանը, առօրեական մտածողության զարգացմանը:

Փաստորեն, հայ վաճառականները յուրօրինակ գործող փիլիսոփաներ էին, որոնք ոչ միայն և ոչ այնքան տեսական պատրաստվածությամբ, որքան

---

<sup>38</sup> Նույն տեղում:

<sup>39</sup> Նույն տեղում, էջ 461:

<sup>40</sup> Նույն տեղում:

սեփական կյանք ու կենցաղով, պատկերացումներով նոր բարքեր, ճաշակ ու մտածողություն էին ներարկում հասարակության մեջ՝ դրանով իսկ նպաստելով առօրեական մտածողության, հասարակական գիտակցության փոփոխությանն ու զարգացմանը:

**А. А. АГАХАНИЯН — Роль армянского купечества в развитии повседневного мышления.** — В статье сделана попытка показать, что армянское купечество параллельно своей экономической деятельности способствовало также развитию повседневного мышления людей. С одной стороны, купцы в своих путевых дневниках рассказывали о виденном и слышанном ими в разных странах, тем самым способствуя развитию повседневного мышления людей, а с другой стороны - своим поведением и нравами вносили изменения в их повседневные представления. С этой точки зрения исследовалось, в частности, письменное наследие трех купцов, а именно О. Товматчяна, М. Шахриманяна и С. Даштеци, оставивших интересные записи о нравах и обычаях разных народов, и сочинение Г. Даранагци.